



### ԿԱՐԾԻՔ

**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝  
Աննա Արմանի Հովհաննիսյանի՝ «Անմեղության կանխավարկածը  
սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավական  
չափորոշիչների համատեքստում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք»  
(սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ,  
բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)  
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Խառատյանի և Ա. Գ. Սաֆարյանի, քննարկեց Աննա Արմանի Հովհաննիսյանի՝ «Անմեղության կանխավարկածը սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունն ամրագրել է անմեղության կանխավարկածի առանցքային բովանդակությունը՝ դրա մանրամասնումը թողնելով Սահմանադրության մյուս հոդվածներին և քրեադատավարական օրենսդրությանը:

Անմեղության կանխավարկածը կազմող տարրերի սպառիչ թվարկումն ամբողջությամբ չի կարող արտացոլել վերջինիս բարդ բովանդակությունը՝ չնայած նրան, որ ապացուցման բեռը և ապացույցների գնահատման տարրերն ունեն զուտ գործնական նշանակություն. եթե անմեղության կանխավարկածի առաջին տարրը երաշխավորում է, որ անձն անմեղ է, քանի դեռ բացառիկ արդարադատական ակտով հակառակը չի փաստվել, և պաշտպանում է անձին նրա մեղավորության մասին կանխակալ դիրքորոշումից ու հասարակական ընկալումից, ապա հաջորդ երկու տարրերը կազմում են ապացուցման գործընթացի հիմքը և ուղենշում են, թե ինչպես կարող է անմեղության կանխավարկածը հաղթահարվել և ապացուցվել անձի մեղավորությունը: Հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական ամրագրման հիմնահարցերը, ինչպես նաև գործառույթային նշանակությունը սահմանադրական քաղաքականության պայմաններում և միջազգային փորձի վերլուծության համատեքստում՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի գիտական հետազոտման և մշակվածության վիճակը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքը, ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Անմեղության կանխավարկածն իրավական կանխավարկածների համակարգում. տեսական և պատմաիրավական վերլուծություն» վերտառությամբ գլխում հեղինակը տեսական, իրավական, պատմական վերլուծությունների համատեքստում ներկայացրել է անմեղության կանխավարկածը՝ որպես իրավական կանխավարկած, այնուհետև անդրադարձել անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական հիմնահարցերին և գործառույթային նշանակությանը սահմանադրական քաղաքականության պայմաններում:

Ատենախոսության երկրորդ գլուխում, որը կրում է «Անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները» խորագիրը, լուսաբանված են անմեղության կանխավարկածի ժամանակակից հիմնախնդիրները սահմանադրական կարգավորումների համատեքստում և

սահմանադրական արդարադատության պրակտիկայում, մեկնաբանված է անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը, բնութագրիչները և գործառնական նշանակությունը սահմանադրաիրավական ժամանակակից կարգավորումների պայմաններում, ինչպես նաև անմեղության կանխավարկածի իրավական ապահովման հիմնահարցերը միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում:

«Անմեղության կանխավարկածի սահմանադրական մեկնաբանությունները և խնդրահարույց ասպեկտները մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկայում» վերտառությամբ երրորդ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է անմեղության կանխավարկածը Սահմանադրության 66-րդ հոդվածի մեկնաբանությունների համատեքստում, քննարկել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկայում անմեղության կանխավարկածի էությունը, մեկնաբանել վերջինիս իրավական բովանդակության շրջանակները և խնդրահարույց ասպեկտները:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը: Վերջինիս շրջանակներում հեղինակը հիմնավոր է համարել այն եզրահանգումը, որ անմեղության կանխավարկածն իրավական կանխավարկածների համակարգում ապացուցողական և, միաժամանակ, հերքելի այն կանխավարկածի տեսակն է, որն արտահայտում է անձի անմեղության վերաբերյալ ենթադրությունը՝ վարույթն իրականացնող մարմիններին պարտադրելով տրամադրել անձի մեղավորության վերաբերյալ սպառիչ ապացույցներ, քանի որ անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Հարկ է նկատել, որ թվարկած հետազոտության արդյունքներն ընդհանուր բնույթի տեսական դիտարկումներ են, ուստի, չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր և կարող էր ներառվել ատենախոսության «Եզրակացություն» բաժնում:

2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող հինգերորդ դրույթը: Մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ հեղինակի կողմից առաջարկվող անմեղության կանխավարկածի իրավական և գործառնության նշանակության միջազգային չափորոշիչների գիտագործնական հիմքերի վերլուծությունն իրականացնել միջազգային իրավական կարգավորման հիմքերի շրջանակներում՝ չսահմանափակվելով միայն Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանությամբ: Միաժամանակ, նույն դրույթի

շրջանականերում հեղինակն ուշադրություն է հրավիրում հինգ ենթադրույթների վրա (ա-ից ե), որոնց համատեքստում ներկայացվում է անմեղության կանխավարկածի իրավական ապահովման երաշխիքների համալիրը: Ըստ էության՝ առաջարկվող ենթադրույթները տեղավորվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տրամաբանության մեջ և չեն պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

3. Ատենախոսության պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթի շրջանակներում հեղինակն անդրադարձել է անմեղության կանխավարկածի հետ համակարգային առումով փոխկապակցված սահմանադրական և քրեադատավարական այլ նորմերի համադրված վերլուծությանը: Մեր դիտարկմամբ՝ անմեղության կանխավարկածը սահմանող որոշ սկզբունք-կանոններ նույնաբովանդակ են: Մասնավորապես՝ անձի մեղավորությունը ճանաչվում է միայն դատարանի կողմից, և որևէ այլ մարմին չունի այդ իրավասությունը (ա), և հանցագործության համար մեղադրվողը ճանաչվում է մեղավոր միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով (ե), ինչպես նաև յուրաքանչյուր անձ ունի անմեղ համարվելու իրավունք (բ) և մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր մեղավորությունը (ժ) եզրահանգումները:

4. Մասամբ թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես՝ գրականության ցանկում ընդհանուր առմամբ բացակայում են նշված աղբյուրների հղումների համարակալման և դրանց էջերի տեղադիրի պատշաճ գրառումները, «Իրավական և դատական ակտեր» բաժնի աղբյուրներում նշված չեն Հայաստանի Հանրապետության պաշտոնական կամ գերատեսչական ակտերի տեղեկագրի հերթական և ընդհանուր համարները: Բացի այդ, նպատակահարմար կլիներ առանձնացնել «Էլեկտրոնային ռեսուրսներ» բաժինը՝ էլեկտրոնային աղբյուրները պատշաճ հերթականությամբ ներկայացնելու համար:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը:


**Հետևություն.** Աննա Արմանի Հովհաննիսյանի՝ «Անմեղության կանխավարկածը սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Աննա Արմանի Հովհաննիսյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք»

(սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Աննա Արմանի Հովհաննիսյանի՝ «Անմեղության կանխավարկածը սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2026 թ. հունվարի 19-ի նիստում, արձանագրություն՝ թիվ 9:

Ամբիոնի պետ՝



Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում են՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր՝



Ա. Է. Սուքիասյան